ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1710

07.07.2017թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-գնդապետ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Մուտք
4628
07 07 2017թ.

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի հուլիսի 1-ին Դիտորդական խումբը հերթական այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի ՄՎ Մարտունու ՁՊՎ արձանագրեց մի շարք թերություններ և խախտումներ:

Թերություններ՝

1. ՁՊՎ-ի խցերի բնական լուսավորությունը գտնվում էր շատ վատ վիճակում: Խորացված ուսումնասիրությունների արդյունքում Դիտորդական խումբը պարզեց, որ երկշերտանի պատուհանների ապակիներից մեկը գունավոր էր, որը խոչընդոտում էր բնական լուսավորության ներթափանցմանը: Ավելացնենք, որ ՁՊՎ-ն ունեցել է 4 խուց, որոնցից մեկը գտնվում էր ՁՊՎ-ի վարչական տարածքում և օգտագործվում է որպես պահեստ: Նշված խցի պատուհանի ապակիները ամբողջությամբ թափանցիկ են և մեկ շարքի վրա տեղակայված են զբոսաբակում, պարզ երևում էր որ տվյալ խցի ապակին թափանցիկ էր իսկ մնացած 3 խցերինը՝ գունավոր էին:
2. ՁՊՎ-ի 4-րդ խուցը, որը օգտագործվում էր որպես պահեստային մաս, այնտեղ էին պահվում ընդհանուր բաժնի իրերը և առարկաները, որոնց շարքում էին պաշտպանիչ վահանները, ռետինե մահակները, սաղավարտները: Գտնում ենք, որ ՁՊՎ-ն նշված իրերի պահեստավորման տեղը չէ, որովհետև ՁՊՎ-ն հանդիսանում է որպես փակ գոտի և ՁՊՎ-ի մուտքի իրավունքը կանոնակարգված է ՀՀ օրենքով: Արտակարգ իրավիճակի դեպքում համապատասխան պարագանները տվյալ ոստիկանության բաժնի ոստիկանների կողմից ստանալու դեպքում մուտք գործելով ՁՊՎ արդեն իսկ խախտվում է <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 48-րդ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ... 3325 10 07 17

ՀՀք.Երևան 0033,Բաղրամյան 79/45
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 27 73 93
E-mail: info@policemonitoring.org

Ա-1820-17

հողվածի պահանջները, որտեղ տվյալ ոստիկանների անարգելք մուտքի մասին ոչ մի հղում գոյություն չունի:

3. Ընդհանուր ՁՊՎ-ի խցերը և տեսակցության սենյակը գտնվում էին փոշոտ վիճակում:
4. Սննդի տաքացման սենյակում բացակայում էր աման լվանալու հեղուկը, սպունգը և մեկ անգամյա օգտագործման ափսեները:
5. ՁՊՎ-ում առկա սառնարանը գտնվում էր անմխիթար վիճակում: Այնտեղ սնունդ պահելու մասին խոսելն ավելորդ է:

Խախտումներ՝

1. Դիտորդական խումբը այցելության ընթացքում ՁՊՎ-ի բուժսենյակի հարևանությամբ արձանագրել է հեծանիվ: Տվյալ օրվա հանձնող և ընդունող ոստիկանները միաժամանակ հայտնեցին, որ դա իրենց բաժնի պետի որդու հեծանիվն է: Հետագայում նշվածը հերքեց հերթապահ մասի պետը, նշելով, որ դա իր անձնական հեծանիվն է: Համապատասխան գրառում կատարելով դիտարկման թերթիկում կրկին փորձեց հերքել այն փաստը, որ դա բաժնի պետի որդու հեծանիվը չէ և ամբողջ ժամանակահատվածը, տվյալ գրառումից բացի, Դիտորդական խմբին փորձում էին համոզել, որպեսզի նշված փաստը չարձանագրվի: Խմբի համար անհասկանալի է օտար մարդու մուտքը ՁՊՎ-ի տարածք և հեծանիվի այնտեղ գտնվելու փաստը:

   Ինչ վերաբերվում է հերթապահ մասի պետի գրառմանը, միանշանակ պնդում ենք, որ նա ստում է, և հեծանիվը պատկանում է նշված բաժնի պետի որդուն:
2. ՁՊՎ-ի զբոսաբակի մուտքի մոտ, վերին մասում գտնվող վանդակաճաղի վրա առկա էր փաթաթած հոսանքալար, անգամ ոստիկանները չգիտեին դրա առկայության մասին, երբ հարցրեցինք թե ինչ հաղորդալար է. նշեցին, որ պոկվել ընկել է, քցել են այնտեղ: Դիտորդական խմբի անդամները փորձեցին ճշտում մտցնեն, հնարավոր է որ լարման տակ է, իսկ ոստիկանները արդեն փորձեցին համոզել որ դա կաբելային հեռուստատեսության լարն է, կից ներկայացված է լուսանկար, որը փաստում է, որ տվյալ լարը եռաֆազ էլեկտրական էներգիայի լար է, և այդտեղից օգտագործվել է մեկ լարում և մեկ զրո: Դիտորդական խմբի մտավախությունը այն է, որ դա ևս մեկ հնարավորություն է սթրեսային վիճակում ՁՊՎ-ում գտնվող անձի ինքնավնասման համար, որը անուշադրության է մատնված ոստիկանների կողմից:
3. Հստակ համոզված պնդում ենք, որ տվյալ ՁՊՎ-ում պահվող անձանց զբոսանքի դուրս բերելը ձևական բնույթ է կրում, քանի որ գրառումները կատարվում են նույն

ժամանակահատվածում, որը իրատեսորեն հնարավոր չէ: Օրինակ՝ ՁՊՎ-ում պահվել են 4 անձ և 4-ին էլ մեկ ոստիկանը միաժամանակ դուրս է բերել զբոսանքի, որը իրատեսորեն հնարավոր չէ: Օրինակ՝ 25.05.2017թ-ին, 30.05.2017թ-ին: Փաստը ապացուցելու նպատակով Ձեզ ենք ներկայացնում հետևյալը՝ Գ.Ա.Ս.-ն ՁՊՎ է ընդունվել 23.01.2016 թ-ին ժամը 14.30-ին ՀՀ ԱՆ ՔԿՀ է տեղափոխվել 26.01.2017թ-ին ժամը 14.05-ին, բայց ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի՝ ժամը 14.00-ից 15.00-ն տվյալ անձը դուրս է բերվել զբոսանքի: Ներկայցված փաստով ապացուցվում է որ զբոսանքի վերաբերյալ գրառումները կատարվում են ձևական, որովհետև տվյալ անձը տվյալ ժամին արդեն իսկ ՁՊՎ-ում չէր, հետևություն՝ գրառումները կատարվում են ավելի շուտ, ձևական:

4. Ռ.Ա.-ն որպես հետախուզվող ձերբակալվածի կարգավիճակով 27.01.2017թ-ին ժամը 12.30-ին ընդունվել է ՁՊՎ ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի 30.01.2017թ-ին ժամը 11.45-ին տեղափոխվել է ՀՀ ԱՆ <<Հրազդան>> ՔԿՀ: Ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի նա նույն ժամին նույն օրը առանց դատարան տեղափոխվելու տեղափոխվել է ՔԿՀ:
5. Ընդհանուր գրանցամատյաններում գրառումները կատարվում են թերություններով: Օրինակ՝ <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում առկա են գրառումներ, որ անձին հրավիրված բժշկի կողմից տրվել է բուժօգնություն սակայն <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>>գրանցամատյանում գրառում չկա անձին խցից դուրս բերելու վերաբերյալ: Բերենք մի քանի օրինակ՝ Ա.Ռ.Ս.-ն 26.01.2017թ-ին զննվել է բժշկի կողմից սակայն <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>>գրանցամատյանում ոչ մի գրառում չկա: Մ.Մ.Մ. 02.02.2017թ-ին, 21.02.2017թ-ին ստացել է բուժօգնություն բժշկի կողմից բայց գրանցամատյանում գրառում չկա:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Ս.Իսկանդարյան

ՀՀք.Երևան 0033,Բաղրամյան 79/45
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 27 73 93
E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

0025 ք.Երևան, Նալբանդյան 130, Հեռ.՝ (010) 59-65-94, Ֆաքս՝ (010) 59-63-11, էլ.փոստ staff@police.am

№ 09/2-1-2597 «01» 08 2017թ.

Ձեր 07.07.2017թ. թիվ 2621/1710 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ Սուրեն Իսկանդարյանին

Հարգելի պարոն Իսկանդարյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2017թ. հուլիսի 1-ին ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Մարտունու բաժնի ՁՊՎ կատարած այցելության ընթացքում արձանագրված թերությունները և խախտումներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Գեղարքունիքի մարզային վարչությունում, որի արդյունքներով տրվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

Թերություններ.

1. Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ՁՊՎ-ի երեք խցերի, ինչպես նաև որպես պահեստ օգտագործվող սենյակի պատուհանները պատրաստված են նույնանման թափանցիկ (այլ ոչ թե գունավոր) ապակիներով և խցերը ապահովված են բնական լուսավորությամբ:
2. ՁՊՎ-ի վարչական տարածքում գտնվող <<4-րդ խուցը>> տեղակայված է ռեժիմային գոտուց դուրս և այնտեղ ձերբակալված կամ կալանավորված անձինք չեն պահվում, հետևաբար այն խուց չի կարող համարվել: Ծառայողական անհրաժեշտությունից ելնելով նշված սենյակում պահվում են բաժնի հատուկ միջոցները, որոնց ստացման համար բաժնի ծառայողները մուտք չեն գործում ՁՊՎ-ի տարածք և <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի պահանջները չեն խախտվում, այլ անհրաժեշտության դեպքում դրանք հերթապահի կողմից տեղափոխվում են զենքերի և հատուկ միջոցների ստացման սենյակ, որտեղից էլ հատկացվում են ծառայողներին:

3-րդ և 4-րդ կետերով նշված թերությունները վերացվել են:

5. ՁՊՎ-ում գտնվող սառնարանը նոր չէ և փոքրինչ գունաթափված է, սակայն այն գործում է անխափան, բոլորովին էլ անմխիթար վիճակում չէ, ինչպես նշվել է դիտորդների խմբի կողմից և որևիցէ անգամ ՁՊՎ-ում պահվող անձանց կողմից այդ առընչությամբ բողոքներ չեն եղել:

Հարկ է նշել, որ որևէ իրավական ակտով նախատեսված չէ ՁՊՎ-ներում ունենալ սառնարան, սակայն այն տեղադրվել է, քանի որ երբեմն անհրաժեշտություն է առաջանում ՁՊՎ-ում պահվող անձանց ստացած հանձնուքները պահել սառնարանում:

Խախտումներ.

1. ՁՊՎ-ի բուժսենյակի հարևանությամբ՝ միջանցքում հեծանիվի առկայությունը թեպետ չի բխում ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի պահանջներից, սակայն նշված հանգամանքով ՁՊՎ-ում պահվող անձանց իրավունքները չեն կարող խախտվել, առավել ևս, որ հեծանիվի

առկայության ժամանակ ՁՊՎ-ում պահվող անձինք չեն եղել: Այնուամենայնիվ դիտորդների խմբի հեռանալուց անմիջապես հետո հեծանիվը դուրս է բերվել ՁՊՎ-ի տարածքից:

2. ՁՊՎ-ի զբոսաբակի վերին մասը ծածկող մետաղյա վանդակաճաղերի վրա առկա փաթաթած հոսանքալարը չէր կարող իրենից վտանգ ներկայացնել ՁՊՎ-ում պահվող անձանց կողմից ինքնավնասում կատարելու համար, քանի որ հոսանքալարը երբևէ լարման տակ չի եղել, գտնվել է զբոսաբակի մետաղյա վանդակաճաղերով 3 մետր բարձրությամբ ծածկի վրա, բացի այդ ՁՊՎ-ում պահվող անձանց զբոսանքը անցկացվում է ՁՊՎ-ի վարչակազմի հսկողությամբ:

3. ՁՊՎ-ում պահվող անձանց զբոսանքի դուրս բերելը բոլորովին էլ ձևական բնույթ չի կրում, այլ այնտեղ շատ հաճախ միաժամանակ պահվում են չորս և ավելի կալանավորված անձինք՝ դատական նիստերին մասնակցելու համար: Դատական նիստերի օրերին վերջիններիս ազատ ժամանակը գրեթե ամբողջությամբ ծախսվում է դատարանում, այդ իսկ պատճառով էլ ՁՊՎ տեղափոխելուց հետո նրանց զբոսանքի են դուրս բերում միասին՝ նույն ժամին: Տեղեկացվում է, որ չորս կալանավորներին միաժամանակ զբոսանքի դուրս բերելու գործընթացին, բացի ՁՊՎ ոստիկանից մասնակցում են նաև հերթապահ մասի պետը ու հերթապահի օգնականը, իսկ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում նշվում է միայն կոնկրետ դուրս բերողի՝ ՁՊՎ ոստիկանի տվյալները: Ինչ վերաբերվում է կալանավոր Գ.Ա.Ս-ին զբոսանքի դուրս բերման և ՔԿՀ տեղափոխման ժամերի համընկնելուն, ապա հայտնվում է, որ նա ՁՊՎ է ընդունվել 23.01.2017թ. ժամը 14.30-ին և 26.01.2017թ. ժամը 17.20-ին ՁՊՎ-ում պահվող մյուս չորս կալանավորվածների հետ միասին տեղափոխվել է <<Հրազդան>> ՔԿՀ, ինչի վերաբերյալ գրառումներ են կատարվել <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում: Իրականում կալանավոր Գ.Ա.Ս-ն 26.01.2017թ. ժամը 14.00-ից 15.00-ն դուրս է բերվել զբոսանքի և դրա վերաբերյալ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում կատարվել է գրառում, սակայն նույն գրանցամատյանում ՁՊՎ ոստիկանը Գ.Ա.Ս-ի ՔԿՀ տեղափոխման ժամը 17.20-ի փոխարեն սխալմամբ նշել է 14.05-ը, ինչպես դիտորդների խումբը սխալմամբ Գ.Ա.Ս-ի ՁՊՎ ընդունվելու տարեթիվը նշել է 23.01.2016թ.:

4. Ձերբակալված Ռ.Ա-ն ՁՊՎ-ում պահվելու ընթացքում դատարան չի տեղափոխվել, քանի որ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից որոշում է կայացվել Ռ.Ա-ի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին և վերջինիս գտնվելու վայրը հայտնի չլինելու պատճառով հայտարարվել է հետախուզում: Ռ.Ա-ն հայտնաբերվել է ոստիկանության Մարտունու բաժնի ծառայողների կողմից, որպես հետախուզվող ձերբակալվել և 27.01.2017թ. ընդունվել է ՁՊՎ, որից հետո իրազեկվել է նույն դատարանին, որտեղ առանց ձերբակալվածի ներկայության վերհաստատվել է կալանքը որպես խափանման միջոց ընտրված որոշումը և հանձնարարվել Ռ.Ա-ին տեղափոխել <<Հրազդան>> ՔԿՀ:

5. ՁՊՎ-ում պահվող անձանց իրավական ցանկացած հիմքով խցից դուրս բերելիս ՁՊՎ վարչակազմի կողմից համապատասխան գրառում է կատարվում <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում: Ինչ վերաբերվում է դիտորդների խմբի կողմից նշված այն դեպքերին, որ Ա.Ռ.Ս-ին 26.01.2017թ., Մ.Մ.Մ-ին 02.02.2017թ. ու 21.02.2017թ. բժշկի կողմից ցուցաբերվել է բուժօգնություն, որի վերաբերյալ գրառումներ չեն կատարվել նշված գրանցամատյանում, ապա հայտնվում է, որ վերջիններս հրաժարվել են բուժօգնություն ստանալու համար դուրս գալ խցերից՝ պատճառաբանելով, որ ի վիճակի չեն և ստիպված նրանց բուժօգնություն ցուցաբերվել է խցերում, հետևաբար <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում այդ մասին գրառումներ չեն արվել:

ՀՀ ոստիկանության շտաբի ՀԾՎ